«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ը ընտանեկան դաստիարակության հարցերում

ՀԵՂԻՆԱԿ Հասմիկ Ջանիկի Ղալեչյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն …….…….
   3
2. ՈՒսուցչի համագործակցության ձևերը աշակերտների ծնողների հետ……..…..5
3. Ծնողների ներգրավվածությունն ուսումնական գործընթացին ……..… . ..7
4. Ուսուցչի և աշակերտների ծնողների միջև համագործակցության եղանակներն ու զարգացման հնարավորությունները ……..…….
   10
5. Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը…….……..14
6. Եզրակացություն…….17
7. Օգտագործված գրականության ցանկ …… 19

Ներածություն

Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: ՎԱՍԻԼԻ ՍՈՒԽՈՄԼԻՆՍԿԻ

Դաստիարակելով երեխաներին՝ այժմյան ծնողները դաստիարակում են մեր երկրի ապագա պատմությունը, նշանակում է՝ նաև աշխարհի պատմությունը: ԱՆՏՈՆ ՄԱԿԱՐԵՆԿՈ

Ընտանիքը երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման և կայացման հարցում: Գաղտնիք չէ, որ հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, մշակույթի, դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը:

Դեռևս հին ժամանակներից երեխաների դաստիրակության գործում առաջնությունը տրվում էր ուսուցիչներին՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները: Այժմ, սակայն, ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սովորողի անհատականությունը: Իսկ անհատականությունը, ինչպես հայտնի է, ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անց է կացնում ընտանիքում, և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը:

Կրթության ոլորտում առկա իրավիճակը պահանջում է ընտանիքի սոցիալական և մանկավարժական աջակցության նոր, առավել արդյունավետ համակարգի ստեղծում, ընտանիքի և ուսումնական հաստատությունների միջև նոր հարաբերությունների ստեղծում: Նման գործընթացի կազմակերպումը պահանջում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների էության խոր գիտակցում, դիրքորոշումների համակարգում, մանկավարժական և ծնողական համայնքների կողմից ընդունված հայեցակարգի մշակում:

Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում սովորողն է, ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է թե՛ դպրոցում, թե՛ ընտանիքում: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ապա հաղթանակն ապահովված է:

Մենք գտնում ենք, որ դպրոցի և ընտանիքի փոխգործակցության ընդհանուր նպատակը երեխաների սոցիալական ձևավորման, դաստիարակության և կրթության համար նպաստավոր պայմաններ ստեղծելը և մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորում ապահովելն է: Ուսուցիչների և ընտանիքների համագործակցությունն ուղղված է երեխաների դաստիարակության հետևյալ ընդհանուր խնդիրների լուծմանը. որակյալ կրթության ապահովում, մասնագիտական հետաքրքրությունների զարգացում և երեխաների պատրաստում մասնագիտության գիտակցված ընտրության համար, սովորողների շրջանում բարոյականության և վարքի մշակույթի ձևավորում, սովորողներին ընտանեկան կյանքին պատրաստում, առողջ ապրելակերպի անհրաժեշտության ձևավորում:

Մեր հետազոտական աշխատանքի նպատակը հետևյալն է.

-ուսումնասիրելով թեմային վերաբերող մասնագիտական գրականություն՝ ներկայացնել ուսուցիչների և աշակերտների ընտանիքների միջև փոխգործակցության արդյունավետ ու նպատակային եղանակներ ու ձևեր,

-ներգրավել ծնողին դպրոցական գործընթացում,

-համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ,

-ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին,

-բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար,

-ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, հետազոտական աշխատանքի հիմնական մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ՈՒսուցչի համագործակցության ձևերը աշակերտների ծնողների հետ

Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգարավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներին: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսուցչի և սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման, դաստիարակության, արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները:

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին.

1. Վստահել: Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսվում է վստահությունից: Վստահության կարևոր պայման է ստացված ինֆորմացիայի գաղտնի պահելը:
2. Պահպանել երկկողմանի կապ: Արդյունավետ հաղորդակցում հաստատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ, պետք է հարցեր տա ոչ միայն ուսումնական բնագավառներից, այլև աշակերտների հետաքրքրություններից:
3. Համագործակցել: Համագործակցող կողմերը հաջողության հասնելու համար ընդհանուր նպատակներ սահմանելիս ընդհանուր եզրեր պետք է գտնեն: Երբ առաջանում է որևէ խնդիր, դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: ՈՒսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են, և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:
4. Կրել ընդհանուր պատասխանատվություն: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը:
5. Լավատես լիել: Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա: Ծնողների հետ հաղորդակցությունը սկսելիս անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական, լավատեսական նոտայով:
6. Պահպանել ջերմ հարաբերություններ: Պիտի լինել ընդունող և աջակցող:
7. Խթանել և քաջալերել:Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, պետք է լսել ծնողի առաջարկները, ուսուցումն արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները:

Ուսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

-ընտանիքում գտնել այն հնարավորությունները, որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա,

-բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան,

-ակտիվորեն ներգրավել ծնողներին ուսումնադաստիարակչական աշխատանքներում :

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ: ՈՒստի անհրաժեշտ է ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետև հաճախ ծնողները ստանձնում են միայն դիտորդի դերը: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը: Պետք է պահպանել ուսուցիչ-ծնող սերտ կապը, որպեսզի ուսման մեջ սովորողը հասնի առաջադիմության առավելագույնին:

Դասղեկի և ծնողների համագործակցության բովանդակությունը իր մեջ ներառում է երեք հիմնական ուղղություն: Դրանցից առաջինը ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունն է, որը ենթադրում է ընտանիքների հետ աշխատանքի կազմակերպման տարբեր ձևեր (ծնողական ժողովներ, անհատական և թեմատիկ խորհրդատվություններ, սեմինարներ և այլն): Երկրորդը դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծնողների ներգրավվածությունն է, ինչն իրականացնելու համար կարելի է կազմակերպել բաց դասեր ու արտադասարանական միջոցառումներ, երեխաների և ծնողների ստեղծագործության օրեր, դասարաններում սահմանել ծնողական հսկողություն և այլն: Երրորդը ծնողների մասնակցությունն է դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը:

Կրկին համոզվում ենք, որ ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասպխանը տալ այն հարցին, թե ինչպես պետք է շփվել ընտանիքի հետ: Շատ բան կախված է ուսուցչի ներընմբռնումից և հմտությունից, ուսուցիչը պետք է վերլուծի հանգամանքները, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում:

Եթե ծնող - ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, ապա ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն պաշտպանված ու կարևոր կզգա: Ծնող- ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Ծնողների ներգրավվածությունը ուսումնական գործընթացին

Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործին արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար: Ընտանիքը յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է ընտանիքները և ծնողներին դիտի որպես գործընկերներ, կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ, ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝ տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով, աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում: Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում: Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները իրենց ավելի լավ են դրսևորում դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է և՛ տանը, և՛ դպրոցում միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավման համար: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում են սոցիալական շատ կարևոր հմտություններ,

և նրա վարքը դրական է դառնում թե՛ տանը, թե՛ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքներին:

Կարևոր է իմանալ, որ ծնող ասելով՝ չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում և պատասխանատու են նրա դաստիարակման և բարօրության համար: Հայրն ու մայրը որպես օրենք հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն, նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն:

Ծնողների ներգրավվածությունը ենթադրում է ծնողների կանոնավոր մասնակցություն աշակերտի ուսման գործընթացին և դպրոցի այլևայլ միջոցառումներին: Ծնողները կարևոր դեր են խաղում երեխայի ուսման գործընթացում, մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին, զավակների ուսման գործընթացին ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումներ ընդունելուն:

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողները ավելի են ներգրավված ուսումնական գործընթացում: Հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, և դպրոց-ծնող-ուսուցիչ կապն ավելի ամուր է: Միջին և ավագ դպրոցներում ներգրավվածությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որ դասղեկները կազմակերպեն ծնողների և սովորողների մասնակցությամբ տարատեսակ բնույթի միջոցառումներ (արշավներ, էքսկուրսիաներ, ցուցահանդեսներ, վարպետության դասեր և այլն): Շփման արդյունքում ծնողներն ավելի լավ կճանաչեն դասղեկին, կտեղեկանան նրա և դպրոցի պահանջներին, նորովի կբացահայտեն իրենց երեխաներին և ավելի լավ կճանաչեն միմյանց:

Այս ամենի հետ մեկտեղ՝ անպայման ծնողների մոտ կարևորում ենք հայոց լեզվի և գրականության դերը երեխաների ուսումնառության գործում: Այս առարկաների ուսումնասիրության արդյունքում կզարգանան սովորողների հաղորդակցական կարողությունները, հիմք կստեղծվի այլ առարկաներից գիտելիք ձեռք բերելու համար, մայրենի լեզվի իմացությունը հնարավորություն կտա սովորելու և հաղորդակցվելու օտար լեզուներով, սովորողների մոտ կզարգանա ճիշտ և գրագետ կապակցված խոսք կազմելու կարողություն:

Գրականության ուսումնասիրությունը հնարավորություն կտա հարստացնելու սովորողի բառապաշարը, պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, կձևավորի գրական ճաշակ և ընթերցասիրություն, կնպաստի սովորողի՝ պատմական ժամանակաշրջանի, հեղինակների կենսագրության, տվյալ գրողի բերած նորության, հայ գրականության զարգացման վրա ունեցած ազդեցության, գրական սեռերի, ժանրերի, ժամանակաշրջանի հետ անմիջական կապի մասին պատկերացման ձևավորմանը:

Գրական երկի ուսումնասիրությունը նպաստում է ստացած գիտելիքը սեփական խոսքով վերարտադրելու հմտությունների, վերլուծական և քննական կարողությունների ձևավորմանը, ազգային ինքնության ճանաչմանը և արժևորմանը:[1]

Ուսուցիչների և ծնողների միջև համագործակցությունը բարելավելու և փոխգործակցության ժամանակակից մեթոդներ փնտրելու նպատակով անց է կացվել հարցում ծնողների շրջանում: Ծնողների և դպրոցների փոխազդեցության և ուսուցիչների ու ծնողների փոխհարաբերությունների բնույթին վերաբերող հարցերին պատասխանելով՝ ծնողների զգալի մասը ասել է, որ վստահում է իրենց որդու կամ դստեր դասղեկին, և կարծում է, որ դպրոցում ուսուցիչների և ծնողների հարաբերությունները բարեկամական են: Ծնողների մեծ մասն էլ գտնում է, որ երեխային ուղղված իրենց պահանջները համընկնում են մանկավարժների պահանջների հետ: Ծնողները դպրոցի նկատմամբ իրենց պարտականությունները տեսնում են երեխաների վարքագիծը վերահսկելու և տնային առաջադրանքների կատարման, միջոցառումների կազմակերպմանն օգնելու, ուսուցիչների պահանջներին արձագանքելու մեջ: Դպրոցը, ի դեմս դասղեկի, ուսուցիչների, ղեկավարության, կարող է ժամանակին տեղեկացնել ծնողներին երեխաների մոտ առաջացող խնդիրների մասին, ներգրավել մասնագետների, հոգեբանների՝ առաջացած խնդիրները լուծելու համար, և անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի նկատմամբ:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ծնողները հիմնականում դրական են վերաբերվում ուսուցիչներին, հույս են դնում նրանց օգնության և փոխըմբռնման վրա՝ իրենց երեխաների դաստիարակության պատասխանատվության մեծ բաժինը դնելով դպրոցի վրա: Փոխազդեցության մասին նրանց ըմբռնումը հանգում է համատեղ միջոցառումների անցկացմանը և սոցիալական նախագծերի իրականացմանը:

[1] https://escs.am/am/news/6928

Ուսուցչի և աշակերտների ծնողների միջև համագործակցության եղանակներն ու զարգացման հնարավորությունները

Երեխայի զարգացման և ընտանիքում դրական հարաբերությունների համար պայմաններ ստեղծելը դպրոցի խնդիրներից է: Դրա լուծման հիմնական միջոցը ծնողների և երեխաների համատեղ գործունեությունն է, որը կարող է կազմակերպվել տարբեր ձևերով:

Կրթական գործընթացին ծնողներին ներգրավվելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքները տարվում են չորս հիմնական ուղղություններով՝ ճանաչողական, տեղեկատվական-վերլուծական, ակնառու-տեղեկատվական և ժամանցային:

Ճանաչողական ուղղության նպատակն է ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորել երեխաների դաստիարակման գործնական հմտություններ: Ծնողների մասնակցությամբ հանգստի, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, արշավների կազմակերպումը, ինչպես նաև բաց դասերը հնարավորություն են տալիս ծնողներին դիտարկել իրենց երեխաներին այնպիսի իրավիճակներում, որոնք տարբերվում են ընտանեկան իրավիճակներից, համեմատել իրենց երեխաների վարքն ու հմտությունները մյուս երեխաների վարքի և հմտությունների հետ, ուսուցիչներից ընդօրինակել դաստիարակության և ուսուցման մեթոդներ և հնարներ, և, ի վերջո, ուսուցչի հետ համատեղ ստեղծել զարգացնող միջավայր երեխաների համար:

Տեղեկատվական-վերլուծական ուղղության նպատակն է բացահայտել ծնողների հետաքրքրություններն ու պահանջմունքները, ինչպես նաև նպաստել ուսուցիչների, ծնողների և աշակերտների միջև հուզական կոնտակտի հաստատմանը:

Ակնառու-տեղեկատվական ուղղության նպատակն է տեղեկատվություն հաղորդող նյութերը ձևակերպել և մատուցել այնպես, որ գրավի ծնողների ուշադրությունը, ներկայացնել գեղագիտորեն էսթետիկ ձևավորված, մշտապես թարմացնել դրանց պարունակությունը, որպեսզի չկորչի դրանց հանդեպ ծնողների հետաքրքրությունը:

Ժամանցային ուղղությունը միտված է ստեղծել ջերմ, վստահելի, հուզական հարաբերություններ ծնողների և ուսուցիչների, ծնողների և երեխաների, սովորողների

և ուսուցիչների միջև: Աշխատանքների այս ուղղությունն ամենապահանջվածը, ամենացանկալին և ամենաօգտակարն է: Ժամանցները, տոները պետք է կազմակերպել ծնողների անմիջական մասնակցությամբ, որպեսզի նրանք պատկերացնեն, թե որքան ուժ, եռանդ պետք է ներդնել ցանկացած միջոցառում կազմակերպելու համար: Արդյունավետ է նաև այդ միջոցառումներին բոլոր ծնողների համագործակցությունը, շփումը միմյանց հետ:

Ուսումնական հաստատության պայմաններում դաստիարակները պլանավորում և իրականացնում են նպատակային մանկավարժական շփում երեխաների և ծնողների հետ: Բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների ինքնաբուխ զարգացող հարաբերությունները, ինչպես նաև պայմաններ ստեղծել սովորողների սոցիալական փոխազդեցության ընդլայնման համար՝ ներառելով նրանց սոցիալական հարաբերությունների համակարգում: Սա թույլ է տալիս երեխաներին ձեռք բերել անկախ վարքի և փոխազդեցության փորձ անկազմակերպ միջավայրում:[2]

Ուսուցչական անձնակազմի փոխազդեցության ոճը նախագծված է դպրոցի թիմի փոխգործակցության մյուս բոլոր համակարգերի վրա: Ուսուցիչները և ծնողները փոխգործակցության ընդհանուր նպատակ ունեն՝ երեխաների դաստիարակությունը: Փոխազդեցության հիմնական բնութագրերն են փոխադարձ գիտելիքը, փոխըմբռնումը, փոխհարաբերությունները, փոխադարձ գործողությունները:

Բոլոր բնութագրերը փոխկապակցված են և փոխպայմանավորված: Որքան ավելի լավ ճանաչեն և հասկանան գործընկերները միմյանց, այնքան ավելի շատ անձնական և գործնական դրական հարաբերություններ ձևավորելու, համատեղ գործողությունների շուրջ համաձայնության գալու հնարավորություններ կունենան:

Փոխազդեցության արդյունավետության ցուցանիշների որոշումը թույլ է տալիս վերլուծել այս խնդրի վիճակը թիմում և կոնկրետ իրավիճակում, որպեսզի նպատակաուղղված կառավարվի մանկավարժական գործընթացի մասնակիցների միջև փոխգործակցության զարգացումը: Փոխազդեցության մասնակիցները գիտեն միմյանց հնարավորություններն ու կարիքները, հասկանում են համաձայնության անհրաժեշտությունը, համակարգում են իրենց գործողությունները՝ դրական արդյունքի հասնելու համար:

Այստեղ ցանկանում ենք բերել ուսուցիչների և ծնողների միջև համագործակցության դրսևորման մի օրինակ, որի ուղղակի մասնակիցն ենք հանդիսացել հենց մենք: 5-րդ դասարանում աշակերտներից մեկն ուներ խոսքի հետ կապված խնդիր: Երեխան, բնականաբար, անհամարձակ էր, կոմպլեքսավորված, երեխաների հետ գրեթե չէր շփվում: Մենք որոշեցինք անհատական զրույց ունենալ

[2] Выготский, Л. С. Педагогическая психология – М., 1991

երեխայի ծնողի հետ: Արդյունքում մենք ավելի մանրամասն ծանոթացանք խնդրին և համատեղ որոշում կայացրինք խմբակային զրույց ունենալ նախ՝ դասարանի երեխաների ծնողների, այնուհետև՝ բոլոր աշակերտների հետ: Բացատրեցինք, որ պետք է նրբանկատ ու հանդուրժող լինել դիմացինի նկատմամաբ, օգնել նրան, չծիծաղել նրա վրա: Ուրախալին այն էր, որ այս զրույցներն ու բացատրությունները իրենց դրական արդյունքը տվեցին: Դասարանի մյուս երեխաները սկսեցին ավելի ուշադիր լինել իրենց դասընկերոջ հանդեպ. օգնում էին նրան բոլոր հարցերում և, իհարկե, այլևս չէին ծաղրում: Ավելին, պետք էր տեսնել նրանց ուրախությունը, երբ իրենց դասընկերը փորձում էր նոր բառեր արտաբերել, և դա նրան քիչ թե շատ հաջողվում էր:

Ուսուցիչների, սովորողների, ծնողների միջև փոխգործակցության զարգացումը տեղի է ունենում նրանց համատեղ գործունեության կազմակերպման գործընթացում, որի արդյունավետությունը մեծանում է, եթե համագործակցող կողմերի մոտ ձևավորվել է դրական վերաբերմունք համատեղ աշխատանքի նկատմամբ, իրականացվում է համատեղ պլանավորում, կազմակերպում և գործունեության արդյունքների ամփոփում, մանկավարժների և աշակերտների դերերի և գործառույթների մանկավարժական նպատակահարմար բաշխում, ստեղծվում են գործունեության տեսակների և մեթոդների ազատ ընտրության իրավիճակներ:

Գործունեության հաջողությունը, դրա մասնակիցների թիմային աշխատանքը կախված են փոխազդող կողմերի փոխըմբռնումից: Ծնողների հետ հարաբերությունները հաջողությամբ կառուցելու համար ուսուցիչը պետք է իմանա նրանց տարիքային առանձնահատկությունները, կարիքները, մտադրությունները, անհատական ունակությունները, հակումները և հետաքրքրությունները, գործունեության կրթական ներուժը, որոշակի գործունեության մասնակցելու պատրաստվածության մակարդակը:

Ուսուցչի նկատմամբ ծնողների վերաբերմունքը պայմանավորված է նաև ուսուցչի մասին նրանց տեղեկացվածությամբ: Նրանց համար ամենահասանելին ուսուցչի գիտելիքների մակարդակի, մասնագիտական որակների մասին տեղեկությունն է, որը երեխաները բավականին արագ բացահայտում են և տեղեկացնում ծնողներին: Միմյանց մասին գիտելիքները ոչ թե պարզապես պետք է արձանագրել, այլ գիտակցել և հասկանալ: Հասկանալ մեկ այլ մարդու՝ նշանակում է պարզել նրա գործողությունների, վարքագծի պատճառները, դրդապատճառները, բացատրել դրանք:

Փոխըմբռնումը ենթադրում է միմյանց սխալները տեսնելու և դրանք ուղղելու շահագրգիռ և բարեհոգի ցանկություն՝ կապված համատեղ աշխատանքում ընդհանուր

հաջողության հասնելու ցանկության հետ:

Ցանկալի է մտածել այնպիսի միջոցառումների համակարգի մասին, որոնք ապահովում են ուսուցիչների, երեխաների, ծնողների միջև բարեկամական հարաբերություններ և ստեղծում են հավասարության իրավիճակներ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների միջև: Այսպիսով, օրինակ, ուսուցչի օրվա հետ մեկտեղ օգտակար է դպրոցում ավանդական դարձնել աշակերտի օրը, ծնողական տոնը կամ ընտանեկան տոնը: Մի շարք հարցեր, որոնք վերաբերում են դպրոցի թիմի կյանքին, նպատակահարմար է հավասար հիմունքներով քննարկել ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ:

Ծնողների հետ դպրոցի ուսուցչական կազմի աշխատանքի համակարգի առաջատար գաղափարը յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի հետ գործընկերային հարաբերությունների հաստատումն է, փոխադարձ աջակցության և ընդհանուր շահերի մթնոլորտի ստեղծումը:

Դպրոցի և ծնողների համատեղ աշխատանքի կազմակերպման հիմնական խնդիրներն են.

- համատեղել ուսուցիչների, աշակերտների ծնողների ջանքերը արտադասարանական միջոցառումներ կազմակերպելու համար,
- ծնողներին տեղեկացնել ուսումնական հաստատություններում պետական կրթական ստանդարտի ներդրման հնարավորությունների, կրթական նախագծի առանցքային դիրքերի և առանձնահատկությունների մասին (դասախոսություններ, սեմինարներ, անհատական խորհրդատվություններ),
- կրթական գործընթացում ծնողների ներգրավվածության պայմանների ստեղծում (ծնողական ժողովներ, համատեղ ստեղծագործական գործունեություն, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն օժանդակություն),
- ծնողների ներգրավումը դպրոցի կառավարմանը (դպրոցական խորհուրդ, ծնողական հանձնաժողովներ) և այլն:

Ծնողների ներգրավումը ուսումնական հաստատության կառավարմանը և ուսումնական գործընթացին ենթադրում է կառավարող խորհրդի ստեղծում, ծնողկոմիտեի աշխատանքների կազմակերպում, ծնողների և դպրոցի միջև պայմանագրերի համակարգի մշակում, զրույցներ ուսուցիչների հետ, ուսումնական գործընթացի (նյութական և տեխնիկական) ապահովում՝ հաշվի առնելով ծնողների հնարավորություններն ու ցանկությունները:

Դպրոցի և ընտանիքի փոխգործակցության ընդհանուր նպատակն է մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների միջև համագործակցային

հարաբերությունների ձևավորում ապահովելը, երեխաների սոցիալական ձևավորման, դաստիարակության և կրթության համար նպաստավոր պայմաններ ստեղծելը:

Ուսուցիչների և ընտանիքների համագործակցությունն ուղղված է որակյալ կրթության ապահովմանը, մասնագիտական հետաքրքրությունների զարգացմանը, սովորողների շրջանում բարոյականության և վարքի մշակույթի ու առողջ ապրելակերպի անհրաժեշտության ձևավորմանը:

Հետևյալ գծապատկերում փորձել ենք պատկերել, թե ինչպես կարող ենք ունենալ արդյունավետ կրթություն և դաստիարակություն ծնողի և ուսուցչի փոխադարձ սերտ համագործակցության արդյունքում:



Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը

Ծնողների և դպրոցի համագործակցության գլխավոր ձևերից են դասարանական ծնողական ժողովները, որոնք անց են կացվում ուսումնական տարվա ընթացքում: Դասարանական ծնողական ժողովների ընթացքում քննարկվում են դասարանի ուսումնադաստիարակչական գործընթացի խնդիրները, պլանավորվում և մշակվում են գործընթացի կազմակերպման ձևերը, որոշվում դպրոցի և ծնողների համագործակցության ուղղությունները, ամփոփվում ուստարվա աշխատանքի արդյունքները:

Ծնողական ժողովներ անցկացնելը նույնքան դժվար է, որքան դասերն ու արտադասարանական աշխատանքը: Այստեղ հանդիպում են ուսումնական գործընթացին մասնակցող երկու կողմերը՝ մանկավարժներն ու ծնողները, որպեսզի լսեն միմյանց և քննարկեն երրորդ կողմի՝ սովորողների հիմնական խնդիրները:

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացը, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, գտնում են երեխայի կրթության վրա ազդելու լավագույն ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով: Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում, և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որը բարդացնում է ծնող-երեխա-մանկավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ծնողական ժողովները ճիշտ վարել, որ կարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել, և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը՝ վաղվա քաղաքացին:

Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու կարևորությունը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության տեսանկյունից՝ շատ կարևոր է, որ ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով, որը պետք է հետաքրքիր և արդիական լինի ծնողների համար: Դասղեկը կամ մանկավարժը պետք է ունենա հստակ նպատակ, ներկայացնի խնդիրները, որոնք որ պետք է լուծվեն համատեղ ուժերով՝ անչափ կարևորելով ծնողի դերը:

Կրթության կազմակերպման հարցում ծնողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար առաջարկում ենք թույլ տալ, որ ծնողները, նախօրոք ծանոթանալով սովորողի ուսումնական նյութին, մասնակից դառնան դասավանդմանը՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները: Իրենց ծնողներին տեսնելով ներգրավված և համագործակցելիս՝ սովորողներն ավելի են խրախուսվում և ոգևորվում ընտանիքի և դպրոցի բարեկամական հարաբերություններից:

Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ կանոններով՝

-ծնողական ժողովի թեման ծնողների համար պետք է լինի հրատապ և հետաքրքիր,

-ծնողական ժողովը պետք է անցկացնել ծնողներին հարմար ժամերին,

-ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ,

-սկզբում պետք է խոսել դրական հարցերի շուրջ, ապա անցնել խնդիրների քննարկմանը, անել առաջարկություններ հետագա աշխատանքների վերաբերյալ,

-նախազգուշացնել ծնողներին, որ չի կարելի քննարկված բոլոր հարցերի մասին պատմել երեխաներին,

-սովորողների ձեռքբերումները ներկայացնելիս խոսել նաև նրանց ունեցած հնարավորություններից ու ընդունակություններից,

-ծնողը պետք է հեռանա ժողովից այն համոզմամբ, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային:

Ծնողական ժողովների ժամանակ պետք է խուսափել ծնողներին բոլորի ներկայությամբ նախատելուց, մի աշակերտին մյուսի հետ համեմատելուց, ողջ դասարանին բացասական գնահատական տալուց, որևէ առարկայի դերը գերագնահատելուց, ծնողների հետ բարձր, հրամայական տոնով խոսելուց: Եվ, ի վերջո, դասղեկը պիտի լինի անաչառ, բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի մեծ զգացում:

Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է հանի սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ, խոսքի, առոգանության, ժեստերի և այլ միջոցներով հարգանք և ուշադրություն պիտի ցույց տա նրանց հանդեպ, պետք է փորձի հասկանալ ծնողներին և ճիշտ որոշի խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց: Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր աշակերտների ծնողները ժողովից գնան՝ հավատով լցված դեպի իրենց երեխան: Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ, ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին, կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրություն ուսման նկատմամբ:

Եզրակացություն

Այս հետազոտության արդյունքում ինձ համար առավել պարզ դարձավ, որ երբ ծնողը ակտիվ և փոխադարձ համագործակցում է ուսուցչի հետ, սովորողի մոտ բարձրանում է առաջադիմության, զարգացվածության մակարդակը, բարելավվում է հաճախելիության ցուցանիշը: ՈՒսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է ընկած: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:

Մենք գտնում ենք, որ հարկավոր է հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումները և գտնել միասնական լուծման տարբերակներ: Հարկավոր է սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:

Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ցանակալի է, որ ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ կիսվի ծնողների հետ:

Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը: Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ:

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

Ա. Ս. Մակարենկոն ասել է. «Երեխաներ աճեցնելն ու դաստիարակելը մեծ, լուրջ և խիստ պատասխանատու գործ է»: Ուրեմն՝ պետք է կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ, նաև աշխարհի ապագա պատմությունը:



Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. , Սահակյան Ա. , Մանկավարժություն, Մանկավարժ, 2005
2. Բոլդիրև Ն. , Դասղեկ, Երևան 1974
3. Գևորգյան Ս., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, «Զանգակ–97», 2002
4. «Հայկական կրթական միջավայր» պորտալ
5. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021
6. Մելքումյան Մ. , Մակարենկոն ընտանեական դաստիարակության մասին, Երևան 1985
7. Մուրադյան Ռ. , <<Դասղեկ> >մեթոդական ձեռնարկ,Երևան 2007
8. Выготский, Л. С. Педагогическая психология – М., 1991
9. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf